



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

«11 06 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000044

Ձեռնարկողը՝

«Լուսի-Արեգ» ՍՊԸ
Ք. Երևան, Շիրակի 82

Գործունեությունը՝

Բանեցրած թթվային մարդկոցների գործածության շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկվություն
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Դոնյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 008044

<<11 >> 06 2020թ.

**Բանեցրած թթվային մարտկոցների գործածության շրջակա միջավայրի
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ներածական մաս

Ձեռնարկող՝

«Լուսի-Արեգ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

գնահատման հաշվետվություն
Ա կատեգորիա

Տեղադրման վայրը՝

ք. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի
արտադրական գոտի

«Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանեցրած թթվային մարտկոցների գործածության՝ ընդունման, պահեստավորման և վաճառման (առաքման) նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Շենգավիթ վարչական տարածքի Շիրակի փողոց 82 հասցեում՝ արտադրական տարածքում: Տարածքը և նրանում գտնվող շենք-շինությունները սեփականության իրավունքով պատկանում են «Նիկոլավ Գրուպ» ԲԲԸ-ին: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է վարձակալության հիմունքներով՝ 400մ² մակերեսով փակ շինության տարածքում:

Գործունեության նպատակն է բնակչությունից և կազմակերպություններից գնել բանեցրած թթվային մարտկոցները և նախատեսված գործունեության շրջանակներում իրականացնել առևտուրային գործունեություն՝ շահույթ ստանալու նպատակով:

Հիդրոերկրաբանական առումով տարածքն աղքատ է գրունտային ջրերից և ըստ ֆոնդային նյութերի տվյալների գտնվում է 30 մետր խորության վրա: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքն ամբողջությամբ կառուցապատված է, բաց հողային մակերեսներ, ջրային ավազաններ չկան: Ամենամոտը Հրազդան գետն է, որի մոտակա հատվածը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 620 մ հեռավորության վրա:

Համաձայն հաշվետվության՝ 2018 թ. Երևան քաղաքում կատարված ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գլուխամեր օգնոյի դիտարկումների՝ արդյունքների՝ տարեկան միջին կոնցենտրացիաները գտնվել են համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (Արդյունակ մակարդակներ):

Նախատեսվող գործունեության իրականացման և հարակց տարածքում՝ պայմանավորված խիտ կառուցապատված լինելու հանգամանքով, ուժանաձնի և պայի



կենդանիներն, ինչպես նաև << Կարմիր գոթերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները բացակայում են:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը փակ շինություն է՝ շրջապատված այլ արտադրական և պահեստային տարածքներով: Գործունեության բուն տարածքին հարակից է մեխանիկական արհեստանոցը: Տարածքի մյուս մասերում են գտնվում ավտոսպասարկման կետը և մի քանի պահեստային շինություններ: Շիրակի փողոցի հակառակ կողմում գտնվում են բնակելի շենքեր, որոնցից ամենամոտ հեռավորությունը 100 մ է:

Գնահատման հաշվետվությունում դիտարկվել են գործունեության իրականացման գրոյական, այլընտրանքային տարրերակների վերլուծությունները՝ համապատասխան գնահատումներով: Վերլուծվել են թթվային մարտկոցների հավաքման 3 տարրերակները.

Ա-միայն դատարկ մարտկոցների ընդունում, որի դեպքում մարտկոցները կուտակվելու են փակ շինությունում, որոշակի քանակի դեպքում բարձվում են գնորդի տրանսպորտային միջոցների մեջ և առաջվում:

Բ-լրակազմ, դատարկ կամ մասնատված մարտկոցների ընդունում, որոնցից լուծոված դատարկվելու և կուտակվելու է հատուկ թթվակայուն նյութերից պատրաստված մի քանի տարողությունների մեջ: Լցված տարողությունները տեղափոխվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների պահեստներ:

Գ-լրակազմ, դատարկ կամ մասնատված մարտկոցների ընդունում: Այնուհետև կատարվելու է մարտկոցներից դատարկված և հավաքված լուծոված վնասազերծում և նստվածքի վերամշակում:

Նախատեսվող գործունեության այլընտրանքների, շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական և բացասական ազդեցությունների գնահատումների վերլուծությունների հիման վրա, ընկերության կողմից ընտրվել է Ա և Բ տարրերակները:

Բանեցրած կապար-թթվային մարտկոցները (Երկրորդային մարտկոցներ) հիմնականում օգտագործվում են ավտոմեքենաներում: Մարտկոցները էլեկտրաքիմիական հոսանքի աղբյուր են՝ կազմված մեկ կամ մի քանի գալվանական էլեմենտներից, որոնց աշխատանքի հիմքում ընկած են օքսիդավերականգնման ռեակցիաները: Մարտկոցներում երկու էլեկտրոդները (կատոդ՝ կապարի երկօքսիդից է, անոդ՝ կապարից) գտնվում են ծծմբական թթվի լուծոված մեջ:

Գործունեության իրականացման ընթացքում առաջանալու են մարտկոցներում պարունակվող էլեկտրոլիտի թափուններ, որը համաձայն բնապահպանության նախարարի 2006 թթվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի, «Ըստ վտանգավորության դասակարգված թափունների ցանկ» հավելվածի, համապատասխանում է «Բանեցված կուտակիչների ծծմբական թթուներ» թափունատեսակին, դասիչ՝ 5210010102012:

Ըստ հաշվետվության՝ մատակարարները մարտկոցներն ընկերություն են բերելու իրենց տրանսպորտային միջոցներով, որտեղ տեղադրված կշեռքների միջոցով որոշվելու է մարտկոցների քաշը: Ընդունելուց հետո՝ փակ շինությունում կատարվելու է մարտկոցների ստուգում և տեսակավորում, առանձնացնելով մարտկոցների պինդ և հեղուկ թափունները: Դատարկ մարտկոցները ժամանակավոր կուտակվելու են բետոնապատ հատակով առանձին պահեստում(100մ²), իսկ փակ (էլեկտրոլիտ պարունակող) մարտկոցները տեղափոխվելու են նոյն շինությունում գտնվող հատուկ առանձնացված՝ տեսակավորման տեղամաս: Այստեղ բժիշների լուծոված դատարկվելու է հատուկ թթվակայուն նյութից պատրաստված, հերմետիկ փակվող, երկու պոլիմերային տարողություններում՝ յուրաքանչյուրը 1մ³.

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու է կիր, թթվակայուն տարաներ, բնակետուրսներից՝ ջուր: Զուրն օգտագործվելու է միայն պահանջմանը անձնակազմի տնտեսական և կենցաղային կարիքների համար (38.48 մ³/տարի): Աշխատավայրներն

օգտվելու են տարածքում գոյություն ունեցող կոյուղու և ջրամատակարարման համակարգից: Գործունեության տարածքում տեղադրվելու է 1 հատ ջրի պահուստային տարրողություն:

Ընկերությունն ընդունելու է առավելագույնը տարեկան 2000 տ բանեցրած մարտկոց, որի արդյունքում առաջանալու է տարեկան 10 մ³ նոր էլեկտրոլիտ (թթվային լուծույթ): Վերջինս պայմանագրային հիմունքներով՝ հերմետիկ փակված տարրաներով (բաքեր) հանձնվելու են համապատասխան լիցենզավորված ընկերություններին, իսկ դատարկված մարտկոցները (պինդ թափոններ) վաճառվելու են տեղում կամ արտահանվելու են: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում արտադրական արտահոսքեր չեն առաջանալու:

Համաձայն հաշվետվության՝ չնախատեսված դեպքերում (ֆորս-մաժորային), երբ հնարավոր չի լինելու էլեկտրոլիտի սպառումը, կատարվելու է հավաքված լուծույթի չեղոքացում: Չեղոքացումը կատարվելու է վարձակալվող շինության առանձին հատվածում (40մ² սենյակում) գտնվող չեղոքացման հանգույցում:

Էլեկտրոլիտ պարունակող մարտկոցներից լուծույթը դատարկվելու է պոլիէթիլենային (ՌԴ արտադրության ՌՕСТ 26996-86 պոլիպրոպիլենային) բաքերի մեջ, որոնցից յուրաքանչյուրի լցվածության մակարդակը կազմելու է բաքի ծավալի 80%-ը: Յուրաքանչյուր բաքի լցման առավելագույն ժամկետը մեկ ամիս է: Չեղոքացումը կատարվելու է կրով (4000կգ/տարի): Կիրը հաշվարկային քանակով կշռվելու և լցվելու է բաքի մեջ, որտեղ թՀ-մետրի միջոցով չափվելու է լուծույթի թթվայնությունը: Անհրաժեշտության դեպքում լցվելու է կրի լրացուցիչ քանակ, մինչև բաքում լուծույթը համապատասխանի 6.5-7.5 թՀ: Չեղոքացված լուծույթն իր մեջ պարունակելու է կալցիումի սուլֆատ, ինչպես նաև 5-15%-ի չափով՝ կապարի և ծարիրի մետաղական խառնուրդներ և միացություններ:

Բաքերի ծառայման ժամկետը 2 տարի է: Վնասված կամ գործածությունից հանված բաքերը՝ ջրով մի քանի անգամ լվացվելուց և չորացվելուց հետո, ընկերության ընդհանուր կենցաղային թափոնների հետ տեղափոխվելու են աղբավայր: Չեղոքացված լուծույթը, չեղոքացման արդյունքում առաջացած նստվածքը, ինչպես նաև բաքերի լվացման ջրերը լցվելու են թափոնների վնասազերծման՝ էլեկտրոլիտի հավաքման տարրողությունների մեջ և տեղափոխվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպության պահեստ:

Նախատեսվող գործունեության աշխատանքների կատարման համար ներգրավվելու են 7 մարդ:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ գործունեության իրականացման ընթացքում կապարի և ծարիրի արտանետումներ չեն լինելու: Բանեցրած մարտկոցներից ծծմբական թթվի մնացորդների դատարկման և չեղոքացման ընթացքում արտանետվելու է ծծմբական թթվի աերոզոլ՝ ՕՊՕ 400մլ մ³/տարի քանակով, որն ըստ գործող օրենսդրության հաշվառվում է, բայց չի նորմավորվում: Գործունեության իրականացման հետևանքով՝ մթնոլորտի վրա հնարավոր ազդեցության տնտեսական վնասը կազմելու է 7840 դրամ/տարի:

Համաձայն գնահատման հաշվետվության գործունեության իրականացման ընթացքում ազդեցությունները հիմնականում կապված են լինելու թափոնների տեղափոխման, դատարկման ընթացքում մթնոլորտային օդում ծծմբական թթվի աերոզոլի պարունակության ավելացման, աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացման հետ: Գործունեության իրականացումը չի ունենալու համարի ազդեցություններ, քանի որ տարածքում բացակայում են արտանետումներ ունեցող այլ արտադրություններ: Հիմնական աղտոտման աղբյուրներ են ավտոտրանսպորտը և բենզինի լցակայանը:

Գնահատման հաշվետվությունում նախատեսվում է օդային ավագանության արտոտումից պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի պարագագ իրավիճակների ռիսկի նվազեցման ուղղված բնապահպանական կողմանականությունը և մոնիթորինգ (մշտադիտարկում):

- գնված մարտկոցների տեղափոխում՝ փակ թափքով մեքենաներում:



- բանեցրած մարտկոցների պահեստավորում՝ թետոնապատ հատակով հատուկ հատկացված պահեստում,
 - էլեկտրոլիտի դատարկում և պահեստավորում՝ հատուկ կահավորված սենյակում,
 - թթուների պահում թթվակայուն նյութերին համապատասխանող և հերմետիկ փակվող տարաներում,
 - թթվային լուծույթի տեղափոխում լիցենզավորված ընկերության տարածք՝ համապատասխան թույլտվություն ունեցող տրանսպորտային միջոցներով,
 - պահեստի կահավորում՝ օդափոխության, հակահրդեհային ազդանշանային համակարգերով,
 - պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված կազմակերպությունների կողմից նմուշառման և քիմիական անալիզի միջոցով, օդում ծծմբական թթվի աերոլոգիական քանակի որոշում,
 - ծծմբական թթվի պարունակությունը որոշելու համար, արտադրական և մերձակա քնակելի թաղամասի տարածքներում (երեք կետերում) մոնիթորինգի իրականացում՝ եռամսյակային, հետագայում՝ տարեկան,
 - աշխատակիցներին համապատասխան արտահագուստի և այլ պաշտպանական միջոցների (թթվակայուն կոշիկներ, ձեռնոցներ, դիմակներ) հատկացում՝ աշխատանքի անվտանգությունն ապահովելու նպատակով,
 - արտակարգ և վթարային իրավիճակների առաջացման դեպքում՝ գործունեության դադարեցում և այլն:

Մոնիթորինգի իրականացման համար նախատեսվելու է 160.0 հազար դրամ/տարի:

Միջոցառումների կատարման համար նախատեսվող ծախսերը կատարվելու են կապիտալ և սպասարկման ծախսերի շրջանակներում՝ էլեկտրոլիտի բաքերի համար՝ տարեկան 60000դրամ, իսկ չեղորացված յունութիւնների համար՝ 48000 դրամ:

Πιατιδωπωρεώνακαν μασ. Ναխատեսվող գործունեությունը կատարվելու է արտադրական տարածքում, որը գտնվում է Երկարամյա մարդածին ազդեցության ներքո: Հանրապետության տարբեր վայրերից կուտակված (լրակազմ և դատարկ) բանեցրած մարտկոցների հավաքումը կկանխարգելի ծանր մետաղներով և թթվային հոսքերով շրջակա միջավայրի հնարավոր աղտոտումը, կնվազեցնի և կկանխի անկազմակերպ արտանետումները: Համաձայն հաշվետվության նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա լինելու է թուլատրելի նորմերի սահմաններում:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները։ Փորձաքննական գործընթացում գնահատման հաշվետվությունն առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է։ Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել։

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հաշվետվությամբ նախատեսված մշտադիտարկման (մոնիթորինգ), և բնապահպանական լուսապատճենությունների կատարումը, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիրը, ինչը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական մարմիններին և հայությանը.
 - Պահպանել բնապահպանական, աշխատանքի անվտանգության լուսաբերությունը, բացառի բազ տարածքում մարտկոնների կուտակումը և պահպանուած հայությունը

ամրագրված բնապահպանական միջոցառումների չբավարարման դեպքում, նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ թույլատրելի նորմաների պահպանմանն ուղղված:

3. ֆորս-մաժորային իրավիճակների դեպքում, ապահովել հաշվետվությամբ նախատեսված լուծույթի չեզոքացման պայմանները:

4. Թթվային լուծույթի տեղափոխումը լիցենզավորված ընկերության տարածք՝ կատարել համապատասխան թույլտվություն ունեցող տրանսպորտային միջոցներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանեցրած թթվային մարտկոցների գործածության նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ



Թ. Նուրիջանյան